

## ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ

### ԿԱՐԾԻՔ

#### ՍԻՐԱՆՈՒՇ ԱՆԴՐԱՆԻԿԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ «ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆ ԻՍՊԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԶ» ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սիրանուշ Կարապետյանի թեկնածուական ատենախոսությունը նվիրված է 20-րդ դարի իսպանական գրականության մեջ հայոց ցեղասպանության թեման պատկերող ստեղծագործությունների համալիր քննությանը:

Այսօրվա՝ աշխարհաքաղաքական զարգացումների համատեքստում նմանատիպ աշխատությունների արդիականությունն ու նշանակությունը դժվար է գերազնահատել, քանի որ տարբեր երկներում, արտասահմանյան գրողների կողմից գրված Հայոց ցեղասպանությանը նվիրված գործերը, յուրաքանչյուրն իր շեշտադրումներով, դիտանկյուններով, գեղարվեստական արտահայտությամբ, կոչված են հիշեցնելու աշխարհին հայ ժողովրդի ողբերգությունը, նրա զավակների հերոսական պայքարը և, հաստատելով մարդասիրական գաղափարներ, դատապարտում են հայոց ցավի նկատմամբ այլ, մասնավորապես՝ եվրոպական երկրների հանցավոր անտարբերությունը:

Սիրանուշ Կարապետյանը ներկայացնում է ութ՝ ճանաչողական մեծ նշանակություն ունեցող վեպ, հոդվածներ և բանաստեղծություններ, որոնցում իսպանացի հեղինակները նախորդ դարի 80-ականներից սկսեցին հայրենակիցներին հաղորդակից դարձնել հայ ժողովրդի ողբերգությանը և հայոց ցեղասպանությունը դիտարկեցին որպես հակամարդկային և հակամշակութային հիմնախնդիր:

Ատենախոսությունը կազմված է Ներածությունից, երեք գլուխներից, որոնք իրենց հերթին ունեն ենթագլուխներ, եզրակացություններից և օգտագործված գրականության ցանկից:

Ներածության մեջ ամփոփված են հայ-իսպանական առնչություններին վերաբերող հայտնի և ոչ այնքան հայտնի հետաքրքիր փաստեր, ներկայացված է ատենախոսության



ուսումնասիրության առարկան, գիտական նորույթը, հիմնավորված է թեմայի ընտրությունը, ձևակերպված են նպատակն ու խնդիրները:

Աշխատանքի առաջին գլուխը վերնագրված է *«Խ.Ա. Գուռիարանի վեպերի գաղափարական ուղղվածությունը և կառուցվածքային առանձնահատկությունները»*:

Սույն գլխի առաջին (*«Ռումբը” վեպի ինքնակենսագրական հիմքերը և փիլիսոփայական հիմնախնդիրը»*) ենթագլխում մանրամասն քննարկվում են իսպանացի լրագրող Խոսե Անտոնիո Գուռիարանի վեպում օգտագործած գեղարվեստական հնարները (*«ինքնաանդրադարձություն»*, *«գիտակցության հոսք»* և այլն) և ժանրային առանձնահատկությունները:

Երկրորդ ենթագլխում, որը վերնագրված է *«Նայեր. Մոռացված ցեղասպանություն” վեպը յուրատեսակ վեպ-ուղեգրություն»*, վերլուծության են ենթարկվում Գուռիարանի 2008 թ. Նայաստան և Արցախի կատարած ճանապարհորդության, հայերի հետ հանդիպումների տպավորությունները, որոնք վեպի դիսկուրսին հաղորդում են հրապարակախոսական որոշակի երանգ:

Ատենախոսը նկատում է, որ, ի տարբերություն նախորդի՝ այս վեպում սկզբունքորեն փոխվում է ցեղասպանության՝ Գուռիարանի ընկալումը, հայտնվում են հեղինակային ակնհայտորեն նոր շեշտադրումներ, ուշադրության կենտրոնում են կանանց կերպարները: Ըստ Կարապետյանի՝ վեպը ժանրային հստակ սահմաններ չունի, մոտ է ճանապարհորդական տպավորություններով, ինքնակենսագրական հենքով պատմագիտական, մշակութային խորհրդածություններով հագեցած ուղեգրության, որում բացահայտվում են Նայաստանն ու հայը: Ատենախոսը հատկապես արժևորում է Գուռիարանի վեպում հայկական մշակույթի և պատմական նկարագրի նոր, ավելի խոր ընկալումը:

Առավել գիտական հետաքրքրություն է ներկայացնում մեր կարծիքով Կարապետյանի ատենախոսության *«Նայոց ցեղասպանության գեղարվեստական կերպավորումը Գոնսալո Գուարչի վեպերում»* վերնագրված երկրորդ գլուխը, ինչը բացատրվում է ուսումնասիրվող հեղինակի գեղարվեստական ավելի բարձր



վարպետությամբ և հայոց ցեղասպանության ավելի լայնամասշտաբ պատկերմամբ, ինչի համար էլ նա Հայաստանի կողմից արժանացել է բազմաթիվ կոչումների և պարգևների:

Այս գլխում ուսումնասիրվում է Գուարչի «Հայկական տոհմաճառ» պատմավիպական եռերգության մեջ ինքնության որոնման խնդիրը: Ատենախոսը բացահայտում է գրողի երեք վեպերի միջև թեմատիկ և գաղափարական կապը, վերլուծում է ժանրային և կառուցվածքային հիմնական առանձնահատկությունները:

Կարապետյանը արժևորում է եռերգության մարդասիրական բնույթը, հանցագործության կանխարգելման գաղափարը, և առաջին ենթագլխում վերլուծում է վեպերում ինքնության որոնման խնդիրը, կերպարների համակարգը:

Հաջորդ ենթագլուխը՝ «Արևմուտք-Արևելք հակադրման և մշակույթների բախման խնդիրը «Հայոց կտակը» վեպում» վերնագրված ենթագլխում ատենախոսը անդրադառնում է Գուարչի՝ 2008 թ. հրապարակած հայոց ցեղասպանության մասին երկրորդ, ճանաչողական առավել մեծ նշանակություն ունեցող գրքի ուսումնասիրությանը, որը ժամանակագրորեն ընդգրկում է 1885-1920թթ.: Այս վեպում Գուարչը հատուկ ուշադրության է արժանացնում հայ և թուրք ազգերի միջև եղած ատելության պատճառները, ընդգծում է մտածողության և մշակույթների հակադրությունը, քննարկում է գլխավոր հերոսի ընտրության ազատության խնդիրը:

Երրորդ ենթագլուխը՝ «"Սպիտակ լեռը" վեպը. Հայոց ցեղասպանությունը որպես հումանիզմի ճգնաժամի դրսևորում» նվիրված է գուարչյան եռագրությունը եզրափակող վեպին և դրանում պատմության հեղինակային հայեցակարգի վերլուծությանը: Ատենախոսը իրավացիորեն եզրակացնում է, որ հեղինակի պատմական հետազոտության միտումի պատճառով երբեմն տուժում է վեպի գեղարվեստական արժեքը: Ատենախոսության այս բաժնում Կարապետյանը հիմնավորված և խոր համեմատականներ է անցկացնում Գուարչի և նույն թեմային անդրադարձած հեղինակների վեպերի միջև:

Ատենախոսության երրորդ գլխի վերնագիրն է՝ «Ցեղասպանության հակամշակութային և հակամարդկային բովանդակության քննադատությունը»: Այստեղ վերլուծության է ենթարկվում Հայոց ցեղասպանության թեմայի մեկնաբանությունը



Մ.Ս.Անգլադայի «Արամի հուշատետրը» վեպում և Մ.Մորտեի ստեղծագործություններում, որոնց համապատասխանաբար նվիրված են երկու ենթագլուխները:

Առաջին ենթավերնագիրը՝ «Մշակույթը կենսունակության պայման Մարիա Անխելս Անգլադայի «Արամի հուշատետրը» վեպում», անդրադարձ է կատալոնացի վիպասանի՝ վեպ-հուշագրություն-օրագրություն սինթետիկ ժանրի միջոցով հայ մի ընտանքի պատմությանը, որը, հաղթահարելով տարագրության և հարազատների կորստի ցավը, հանգրվանում է օտար երկրում՝ փորձելով պահպանել ազգային ինքնագիտակցումը:

Երկրորդ ենթավերնագրի ներքո՝ «Մարդու և պատերազմի փոխհարաբերության պատկերումը Մարկ Մորտեի ստեղծագործության մեջ», ատենախոսը քննության է ենթարկում լուսանկարիչ և գրող Մարկ Մորտեի 2008թ. լույս ընծայված, հայոց ցեղասպանությանը նվիրված «Արարատի զավակները» վեպը: Ըստ Կարապետյանի՝ սույն ստեղծագործությունը գրողական մտահղացման, կերպարաստեղծման ու գրական երկի գեղարվեստական ձևի առանձնահատկությունների առումով շահեկանորեն տարբերվում է մինչ այդ իսպանական գրականության մեջ հայոց ցեղասպանությանն անդրադարձած իսպանացի հեղինակների ստեղծագործություններից: Գրողը խորամուխ չէ ցեղասպանության պատճառների կամ այն իրականացնողների կերպարների պատկերման, այն միջավայրի, որը ծնել է նման ոճրագործների, այլ կարևորում և ընդգծում է հերոսի հոգեբանական նկարագիրը: Ներկայացնելով մի մարդու, որը հայտնվել է սահմանային իրավիճակում, Մորտեն վարպետորեն պատկերում է նրա հոգեցնցումներն ու մտասևեռումները:

Եզրակացություններ բաժնում Կարապետյանը ընդհանրացումներ է կատարում՝ կարևորելով այն առանձնահատուկ սեփական մտահանգումները, որոնք կատարել է ուսումնասիրության ընթացքում:

Դրվատելի է ատենախոսի լրջամիտ, վերլուծական մոտեցումը ուսումնասիրվող ստեղծագործություններին, նրա ձգտումը գնահատելու դրանց գեղարվեստական արժեքը, համադրելու, համեմատելու հեղինակների մոտեցումները քննարկվող թեմային և, իհարկե, հանգելու ինքնուրույն եզրակացությունների:

Ատենառոտության երեք գլուխներում Կարապետյանը վերհանում է ստեղծագործությունների թե՛ ժանրային (օբյեկտիվ վեպ, վեպ-օրագիր, վեպ-



ժամանակագրություն, պատմականագրական վեպ, վեպ-հիշողություն և այլն), թե՛ հեղինակների գեղարվեստական մեթոդի առանձնահատկությունները, հետևելով դրանց զարգացմանը, փոփոխություններին և տարբեր մեթոդներին հատուկ տարրերի միախառնմանը (գիտակցության հոսք, մոնտաժ, պաստիժ և այլն):

Հատուկ ուզում եմ նշել Կարապետյանի գրականագիտական վերլուծություններում փիլիսոփայական տարբեր՝ Յունգի, Հայդեգերի, Նիցշեի և այլոց տեսություններին անդրադարձը, պատմության տարբեր դարաշրջանների հիմնավոր իմացությունը:

Դրվատելի է նաև, որ Կարապետյանը, տիրապետելով իսպաներենին, համեմատել է բնագրերի և հայերեն և ռուսերեն թարգմանությունները, և վերհանել է դրանց տարբերությունները, ինչպես նաև ուսումնասիրել է երեք լեզուներով քննադատական գրականություն:


Ատենախոսությունը գրված է հստակ գրագետ լեզվով և պատշաճ գիտական ոճով:

Սեղմագիրը արտացոլում է ատենախոսության հիմնական բովանդակությունը:


Այսպիսով՝ Սիրանուշ Կարապետյանի «Հայկական ցեղասպանության թեման իսպանական գրականության մեջ» թեկնածուական ատենախոսությունը բավական ինքնուրույն, համապարփակ հետազոտություն է և համապատասխանում է նմանատիպ աշխատություններին առաջադրվող պահանջներին, ուստի և հեղինակը լիովին կարող է հավակնել իր հայցած բանասիրական գիտությունների թեկնածուի կոչմանը:

Վ. Բրյուսովի անվ. Պետական Համալսարանի

Համաշխարհային գրականության և

մշակույթի ամբիոնի վարիչ, բ.գ.դ., պրոֆ.  Նատալյա Խաչատրյան

Ն. Խաչատրյանի ստորագրությունը հաստատում էմ

Վ. Բրյուսովի անվ. ՊՀ-ի գիտական քարտուղար  Ն. Փիլավջյան

